ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

22 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 185

ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՀԱԿՈԲ ՅՈՒՐԻԿԻ ՔՈՉԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետին, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ կետին համապատասխան և ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 33-րդ կետով, 18/05/2006թ. թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով և և հիմք ընդունելով քաղ. Հակոբ Յուրիկի Քոչարյանի դիմումը՝ ինքնակամ կառույցը օրինականացնելու մասին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի Վայք քաղաքի Ջերմուկի խճուղի 45/1 հասցեում գտնվող քաղ. Հակոբ Յուրիկի Քոչարյանի կողմից կառուցված 97.5 քմ մակերեսով բնակելի տունը, որի զբաղեցրած և սպասարկման համար առանձնացված հողամասի մակերեսը կազմում է 0,06251 հա, համարել օրինական և ճանաչել համայնքային սեփականություն:
2. Ընդունել ի գիտություն, որ կառույցը պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում այլ քաղաքացիների կյանքին ու առողջությանը: Ինքնակամ կառույցը քանդման ենթակա չէ, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտեին՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու նպատակով:
4. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված 97.5 քմ մակերեսով կառույցը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար առանձնացված 0.06251 հա հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքի ձևով, օրինականացման համար սահմանված չափով և կարգով առաջարկ կատարել կառույցն իրականացրած անձ Հակոբ Քոչարյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

25 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 186

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂ. ՏԱՐՈՆ ՍԱՖԱՐՅԱՆԻ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության համայնքների/բնակավայրերի/ գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. մայիսի 2-ի թիվ 609-Ն և 2010թ. մարտի 4-ի թիվ 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայքի համայնքի Վայք քաղաքի Սիամանթոյի փողոց 1-ին նրբանցք, 24 հասցեում գտնվող քաղ. Տարոն Սաֆարյանի բնակավայրերի նպատակային նշանակության այլ գործառական նշանակության հողատարածքի գործառնական նշանակությունը փոխել որպես բնակելի կառուցապատման հողամասի.
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 187

ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ԹԱԹՈՒԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆԱԾ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ՋԵՐՄՈՒԿԻ ԽՃՈՒՂՈՒ ԵՎ ԹԻՎ 3 ՍԵԼԱՎԱՏԱՐԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հանգուցյալ Թաթուլ Հարությունյանին պատկանած/սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 1997711/ Վայք քաղաքի Ջերմուկի խճուղու և թիվ 3 սելավատարի հարակից տարածքում հողատարածքը վերահասցեավորել որպես Վայք համայնք, ք. Վայք, Ջերմուկի խճուղի, հողատարածք թիվ 32/40:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

03 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 188

<<ՀԱՅԷԼԵԿՏՐԱՄԵՔԵՆԱ>> ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՇԵՆՔԸ ԶԲԱՂԵՑՐԱԾ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՈՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. <<ՀԱՅԷԼԵԿՏՐԱՄԵՔԵՆԱ>> բաց բաժնետիրական ընկերությանը պատկանող /սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 1206731/ Վայք քաղաքի Շահումյան փողոցի աջակողմյան հատվածում գտնվող գործարանի շենքը՝ զբաղեցրած և սպասարկման համար առանձնացված հողատարածքով հասցեավորել որպես Վայք համայնք, ք. Վայք, Շահումյան փողոց, թիվ 32:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

03 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 189

ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ԱՆԳԻՆ ԶԱՔԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆԱԾ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ՋԵՐՄՈՒԿԻ ԽՃՈՒՂՈՒ 53 ՇԵՆՔԻ ԲԱԿԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԹԻՎ 35 ՀՈՂԱՄԱՍԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հանգուցյալ Անգին Զաքարյանին պատկանած/սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 2444520/ Վայք քաղաքի Ջերմուկի խճուղու 53 շենքի բակային մասում գտնվող թիվ 35 հողամասը վերահասցեավորել որպես Վայք համայնք, ք. Վայք, Ջերմուկի խճուղի, հողատարածք թիվ 53/35:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

17 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 190

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով համայնքի ավագանու 17.12.2021թ. N 50 որոշումը, և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 102-րդ հոդվածի 3.2-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ընտրված լինելով համայնքի ավագանու կողմից՝ 2021 թվականի դեկտեմբերի 17-ից ստանձնում եմ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ղեկավարի լիազորությունները:
2. 2021 թվականի դեկտեմբերի 17-ից դադարեցնում եմ Վայք համայնքի ղեկավարի պաշտոնակատարի լիազորությունների կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 191

ԱՐՄԵՆ ԶԱԼԻԲԵԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետին, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետին համապատասխան և ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 33-րդ կետով, 18/05/2006թ. թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի Վայք քաղաքի Շահումյան փողոց 88 հասցեում գտնվող քաղ. Արմեն Զալիբեկի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող/վկայական թիվ 07122021-10-0011/ տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված 34,8 քմ մակերեսով առևտրի սրահը համարել օրինական:
2. Օրինականացման ենթակա առևտրի սրահի մակերեսը չի գերազանցում բնակելի տան մակերեսի 50%-ը, ապա հողամասի գործառական և նպատակային նշանակության փոփոխություն չի կատարվում:
3. Ընդունել ի գիտություն, որ կառույցները պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում այլ քաղաքացիների կյանքին ու առողջությանը: Ինքնակամ կառույցները քանդման ենթակա չեն, կառուցված չեն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4. Սույն որոշման 1-ին կետում նշված շինության համար սահմանված 98971,2/34,8Х2844 դրամ/ գումարը ենթակա է վճարման՝ սույն որոշումը ուժի մեջ մտնելուց հետո 60 օրվա ընթացքում: Նշված գումարը չվճարելու դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**